Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format
**Adapt** — remix, transform, and build upon the material

ՀԵՆՐԻԿ ԲՈԽՄԱՆՅԱՆ

# ԱՐԵՎԱԾԱԳ



ՀԱՅՊԵՏՀՐԱՏ
ԵՐԵՎԱՆ-1936-ՄՈՍԿՎԱ

ՀՍՍՀ
ՊԵՏՀՐԱՏ

Հենրիկ Թումանյան

# ԱՐԵՎԱԾԱԳ

ՀԱՅՊԵՏՀՐԱՏ
ԵՐԵՎԱՆ—ՄՈՍԿՎԱ
1936

ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱ
A 8274
~~20048~~

Պատ. խմբ. Ա. ԱԴՈՅԱՆ
Տեխ. խմբ. Հ. ՔԱՐԱՄՅԱՆ
Շապիկը Լ. ՄԵԼՔՈՆՅԱՆԻ
Սրբագրիչ Մ. ՀԱԿՈԲՅԱՆ

# ԽՍՏՈՒԹՅՈՒՆ

*Սովորեցի այստեղ յես է՛լ*
*Լինել զգաստ, լինել տոկուն։*
ԵՂ. ՉԱՐԵՆՑ

Խստությունն է ահա վորպես կապար
Մանրությամբ գանգատ նստում հոգուս,
Ահա յերկինքը գորշ, ամպամած
Յեվ մարդիկ, վորոնք իրենց հոգում
Նոր խնդություն, նոր կորով պահած
Մաքառում են, հար ու հար յերգում։

Անցնում են ահա այդ յերկաթե
Շարքերը մինչև ուշ իրիկուն,
Յերկաթ թռչուններ՝ նորից արդեն,
Վոր հորիզոնում են աղմկում —
Թռչում են բարձր ու ամպերան թեթև,
Մինչև արևն իր աչքն է փակում։

Շարքերն այն հսկա ու բազմամարդ,
Վոր հոսում են, ահա, գիշեր, ցերեկ.
Նրանք, վոր յերկրին վառվող, անմար,
Բերեցին պայծառ մի նոր արև.
Մի արև, վոր նոր մարդու համար
Բացեց լուսավոր նոր կամարներ։

Ու գարերի այդ մռայլ միջից
Ցոլել են կրկին նրանց արդեն,
Որ պայքարով նոր, կռվով վերջին
Հին հետքերը նորից քանդեն,
Որ վորպես ջուրը աղբյուրի ջինջ
Ծագա նոր մարդը այս խնդագին։

Ահա թե ինչու նրանք դեռ հար
Ցոլնում են, դառնում արևի հետ,
Իրենց քրտինքը վորպես գոհար
Խառնում յերկաթի ու մրի հետ,
Որ հաղթանակը մեր պայքարի
Մեր ձեռքերում, մեր սրտում պահենք։

Մեծ քաղաքում այս, ուր Լենինի
Հրաբորբ, պայծառ արևի տակ՝
Դառնում են արագ քանի՛, քանի,
Անիվներ, փոկեր ու պտուտակ,
Յեռում է կյանքը ընդդեմ հնի,
Յեվ բարձրանում է նոր արեգակ։

Յերբեմնի մռայլ այս մշուշում
Նոր ամրոցներ ենք մենք կառուցել,
Բայց դեռ անցել են քանի՛ աշուն,
Ինչքան մարտեր ենք մենք ունեցել,
Մինչև արևը այս շողշողուն
Մեր կյանքի դաշտն է բարձրացել։

Յեվ արևի այդ լույսի ներքո
Մտնում ենք այսօր մենք գործարան,
Ու ամեն, ամեն, ամեն հանքում
Փշրում ենք հինն այն կործանարար—

*Նոր խնդությամբ ենք մենք գովերգում*
*Երկիրը մեր նոր ու փրկարար։*

*Իսկ յերբ արևը հորիզոնից*
*Լուսատու շողերն է յերկրին նետում*
*Ցնծում են շարքեր քանի՜, քանի՜,*
*Մեր շարքերը կուռ ու ավետում՛—*
*Վոր վորպես մի վիհա կամ մի անիվ*
*Ու մեքենայի մասնիկ դարձած՝*
*Կքայլենք խրոխտ յելած է մեր*

# ԱՀԱ ԱՐԵՎ Է ՆՈՐԻՑ

Ահա արև է նորից ու կրկին արև,
Կրկին փակել են ահա խուրձերը լույսի, —
Պտտվում են արծիվներն իմ գլխի վերև,
Կարծես գրկել են ամուր մեկը մյուսին։

Այժմ զգում եմ արդեն՝ իմ հոգու խորքում,
Վոր կոփվում եմ ամեն ժամ ու դառնում ուշիմ,
Վոնց ընկերներն իմ բազում հանքերի խորքում
Չունեն անգամ մի դառը նշույլ հին հուշի։

Իմ դեմ քայլում են խրոխտ ու նորից յերգում,
Բրոնզաձույլ դեմքերով շարքեր բազմաթիվ,
Զգում եմ, վոր ինքս կամ այդ ամեն շարքում,
Յեվ դառնում է կամքը մեր՝ նման յերկաթի։

Ու յերկաթե պես տոկուն այդ մենք ենք ահա,
Վոր մտնում ենք ամեն հանք, բերդեր գրավում,
Այդպես սրտում իմ վառման կրակն է պահած,
Նոր կորովի, նոր մարտի, նոր կռվի ծովում։

Յեվ իմ կյանքում ինչ վոր յես տեսա ու տարա, —
Թե դառնություն, թե արև, թե յերգ խնդագին,
Բայց յես հասա իմ պայծառ որվան յերազած
Ու նոր հրե յերգերով վառվեց իմ հոգին։

Յեվ թող այդպես տարիներ վառվի ու փռվի
Մեր պայքարի քրտնաջան ամեն հաղթանակ,
Դու, մարտակոչ իմ ընկեր, նետվենք նոր կռվի,
Մեր շարքերը կապարե, դեռ թող ընթանան։

# ՅԵՐԳԵՐ ԱՄԱՌՆԱՅԻՆ

## 1. ԱՐԾՎԻՆ

*Ամառնային իմ արև, դու, վոսկեվառ իմ կրակ,*
*Նորից ցողերդ փռիր մեր ծով դաշտերի վրա…*

*Դու մայրական գգվանքով հորիզոնից բարձրացիր,*
*Մինչև լցվեն բերքերով մեր վողջ դաշտերն անծիր…*

*Մինչև հասկը բարձրանա նոր խնդությամբ նոր յերգով,*
*Լցվեն դաշտերը դարձյալ ու ծիծաղեն բերքով։*

*Դու նման ես այն բազում մեր մայրերին հոգատար,*
*Վորոնք կաթ են ներարկում մանուկներին անդադար…*

*Ու անհամար փնջերով — քո հրեղեն շողերի*
*Բորբոքում ես սիրտը դեռ համայնական հողերի։*

## 2. ԲԵՐՔԸ

*Մենք քաղում ենք ահա այն հին անապատից*
*Վողկույզները լուսե, վոսկյա հասուն հատիկ…*

*Վորոնք ժպտում են դեռ ժպիտներով մանկան*
*Յեվ սպասում մեր մեծ մարտին հերոսական…*

*Արևի ջերմ տոթից տապակվում է դաշտը,*
*Չի նահանջում սակայն մեր ամրակուռ վաշտը…*

Չի նահանջում անգամ արևը հուր, վառկի՞,
Ու նետում է շողն իր մեր ամեն մի հասկին...

Ու յեղնում է անվերջ բերքը կոհակ-կոհակ,
Վորպես լուսե մի յերգ և քրտինքի գոհար։

## 3. ԱՄԱՌՆԱՄՈՒՏ

Նորից ամառ, նորից կրակ,
Նորից արև հրեղեն,
Նորից համայն հողի վրա
Բերքը յեղավ հեղեղեց։

Հավաքվել են ամեն, ահա նրանք՝
Կոլխոզնիկները խաղողի,
Ծծում են դեռ՝ հյութը առատ
Մեր արևից, մեր հողից։

Հողն էլ մեզ հետ, ջուրն էլ մեզ հետ,
Յերգում են յերգը համառ,
Մեր ամբարն այրիր քո շողերով,
Դու, վառկեծուփ նոր ամառ։

# ՀՆՁՎՈՐՆԵՐԸ

*Քաղում են նրանք, քաղում են,*
*Հասկերը հասուն, վոսկեղեն,*
*Բայց դարձյալ ամեն մի ցողունը*
*Դեռ հողում իր ծիլն է թողել։*

# ԱՇՈՒՆ

*Աշուն, աշուն, վոսկե աշուն,*
*Վոսկեատերև բերքի աշուն,*
*Տերևներդ դեղին, դեղին,*
*Քամին է հար հեռու քշում։*

*Թեվ տարիներ քանի՜ քանի՜*
*Պիտի բերքի ծովը փռես,*
*Պիտի յերգի նորից քամին*
*Ու մերկ ծառերդ որորես։*

*Աշուն, աշուն; վոսկե աշուն,*
*Վոսկեատերև բերքի աշուն։*

# ՍԱՀՄԱՆԱՊԱՀԸ

*Ծանրացել է գիշերը,*
*Իսկ նա դեռ արթուն է,*
*Կանգնել է գորշ մշուշում,*
*Ցեխ աչքերն իր թարթում նա.*

*Սեղմել է հրացանը,*
*Միրան է անդուլ լսում,*
*Հայացքը իր հրացայտ*
*Նայում է հեռ հեռուն.*

*Այդպես ամեն գիշեր*
*Մարտում անհնորյա —*
*Իր զենքով է զինվում,*
*Կանգնում դիրքի վրա.*

*Սահմանապահ մարտիկ, ընկեր սահմանապահ,*
*Քեզ հետ մենք էլ մեր մեծ սահմանին ենք հսկում,*
*Երբ աշխարհնում մեր լույս ու դաշտերում համայն*
*Բարձրանում են հղի հասկինները վոսկունե.*

---

## ՋՐԻ ԿԱԹԻԼԸ

*Ահա ջուրը, ջրի մի կաթիլ*
*Ծծվում է հողի արգանդում, —*
*Վոնց արյան կաթիլներն անթիվ*
*Իմ հրե, արեվառ իմ սրտում։*

*Իսկ հողի, սև հողի համար*
*Այդ կաթիլն արյուն է դառնում,*
*Ցոլնում են հասկերն անհամար*
*Ու մեր դեմ հառնում։*

*Յեվ այդպես մեր կյանքում ամենքը*
*Սնվում են այդ արյան կաթիլով,*
*Մեր սիրտը փխրուն այն հողի հետ*
*Կապվում է վոսկյա մի թելով։*

# ՆԱՅԻՐՅԱՆ ՀՈՒՇԵՐԳ

*Իսկ նոր համար տղան դարձել էր հանելուկ…*
ԵՂ. ՉԱՐԵՆՑ

*Յերբ գիշերն և աքսորն կրկին նետում էր ճամբան*
*Ու աշխարհի վրա վողջ իր սև վերմակն է փռում,*
*Կրկին յես տուն եմ դառնում ամենորյա իմ ճամբով*
*Յեվ սեղանին իմ դարձյալ նույն պատկերն է թափառում։*

*Նույն պատկերն է թափառում, և նրա լույս աչքերից*
*Անձայն կաթում են ահա արցունքի զույգ կաթիլներ։*
*Դեռ տանջվում է նա, կարծես զգում էր հին հուշերի,*
*Ու դեռ թափվում են դեմքին սպիտակ ձյան փաթիլներ։*

*Բայց նա, պատկերն այդ լուռ, այդ ձյուներես պատանին*
*Ի՞նչ է տեսել իր կյանքում և ինչեր է յերազել,*
*Արդյոք ինչպես դառնությունն ու տխրությունը տանի,*
*Յեվ փոթորկի դեմ գալիք կանգնի նա թույլ ու անզեն։*

*Բայց նա տեսել է նաև որերն այն թեն, վոր անցան*
*Ու յերազի պես անդարձ միայն հուշեր թողեցին,*
*Հետո իր հայրն է յելնում վոնց բրոնզե մի արձան*
*Ու կանգնում է անկյունում մի փոշապատ փողոցի…*

*Հայրը՝ հայրը և նրա, խոստապահանջ էր այնքան,*
*Վոր չեր սիրի — թեկուզ դու փոքր հանցանք գործեիր։*

Ինքը կարծում էր իրեն ժողովրդի դեմ արքա,
Որ կարող է հետևել քո ամեն մի փորձերին։

Յեվ նա ինչպես չհիշի այն յերեկոն, յերբ արդեն —
Նայիրական մի փոշոտ փողոցով տուն էր դառնում,
Նա յերազում էր մտքում հազարանուն բյուր վարդեր,
Որ ջրերի կարկաչին իրենց թովչանքն են խառնում։

Ու նա հիշեց մի վայրկյան, թե ինչպես նույն փողոցից
Անցավ մի մութ յերեկո գլուխը ցած խոնարհած,
Յերբ դառ ժպիտ յերեսին հայրը անցավ դիմացից,
Սրտում իր հին ոխերի վողջ դառնությունը պահած։

Հիմա այդ լույս պատանին այլ որեր է յերազում,
Այլ արևներ են շողում նրա ձյունե ճակատին.
Այլ հունով են իր տեսած ջինջ առվակները հոսում,
Վորոնք հորդուն ու վարար գետեր դառնան դեռ պիտի։

# Մի մանկան պատմություն

Դու ծնվեցիր մարտերում, կյանքի փորձանքը տարար,
Նոյեմբերը քեզ ծնեց և նա քո մայրը դառավ...

Երբ լուսինը լողում էր արյան հեղեղ այն ծովում,
Քեզ պես հազար մանուկներ լալիս էին ու հևում...

Նրանք ուզում էին հաց և վառկիզող մի արև,
Որ իրենց վորբ աչքերին կյանքի նոր լույսը բերեր:

Իսկ մայրերը նրանց խեղճ անապատում թաղեցին,
Կարոտ լույսի, խնդության, մեր նոր կյանքին ու հացին...

Գնացին ու չդարձան միշտ վառկեփայլ հույսերով,
Եվ ճանապարհ դրինք մենք արեգնական լույսերով:

Այժմ արյունը դրոշմեց քո մանկական ճակատին,
Եվ աճեցիր դու այդպես՝ հենված խարխուլ մի պատի:

Իսկ մանուկներն այն բոլոր, վորոնք քեզ հետ ծնվեցին,
Ո՞ւր գնացին, արդյոք ձուր և ի՞նչ բեռքով անվեցին...

Բայց, ախ, ընկան նրանք հար—քաղցի դուռը ծեծելով,
Սալիկներում թաղված վերջին կաթը ծծելով:

Վերջին արևը մղոտ գերեզմանին այն հողի,
Մայրը վերջին համբույրով վերջին մանկանն էր թողեց...

Թողեց նա տունն իրեն հին ու կանթեղները մարավ,
Այնտեղ դրոշը մեր նոր, նոր վորդիներ նա գտավ:

---

## ԼԻՐԻԿԱԿԱՆ ՏԵՏՐԱԿԻՑ

### 1.

*Ահա նորից կանգնել եմ, այդ դու յես,*
*Այդ դու յես կրկին ինձ կանչում,*
*Նույն յերգով իմ սիրտը հմայում ես*
*Եվ քո դեմ առվակն է կարկաչում։*

*Փոքրիկ այդ առվակը, ուր ջուրը զուլալ է,*
*Վոր վազում, ճչճչում է, մանկան պես կանչում,*
*Թե կարող ես, բացիր յերգիդ նոր կանալը —*
*Ինչպես այս ջուրն է կարկաչում։*

### 2.

*Զգում եմ ահա, վոր նա գալիս է,*
*Վոր մոտենում է կրկին աշունը,*
*Այն մոտ է, մոտ է, — նստած լալիս է,*
*Դրսում մրսում է իմ պառավ շունը։*

*Եվ ի՞նչ է աշունը, դեղին այդ փոշին,*
*Վոր փռվում, տարածվում է աշխարհի վրա,*
*Թափվում են տերևներն այս գորշ մշուշին,*
*Ու մոխիր դառնում՝ վոնց հանգչող կրակ։*

*Ահա մարդկային ձեռքերը քաղում—*
*Քաղում են աշնան բերքը վառկենակ,*
*Նրանք բարձրանում, իմ սիրտն են հուզում,*
*Ամբարվում ձյունից կոհակ առ կոհակ։*

# ԳԱԶԵԼ ՄՈՐՍ

Ահա այդ դու չես կրկին, մայր իմ լուսե, անմոռաց,
Ա՛խ, լսում ես իմ յերգը, մայր իմ լուսե, անմոռաց։

Դու ծերացար հոգսերից—ամբողջ հասակդ տարար,
Հաղթությունը քեզ գրկեց, մայր իմ լուսե, անմոռաց։

Զմռսացար սակայն դու հինը, հինը այն տխուր,
Հինը, վոր մահն է բերում, մայր իմ լուսե, անմոռաց։

Այդպես բոլորս հերթով պիտի գնանք աշխարհից,
Վոր նորերը գան հանդես, մայր իմ լուսե, անմոռաց։

Վորդիդ հասակ է առել, հասունացել է արդեն,
Ցնծել է քեզ ոգնելու, մայր իմ լուսե, անմոռաց։

Ցավ աշխարհում այսքա՛ն ծով, պատանեկներում մեր դալար,
Ի՞նչ ես թողել վոր տանես, մայր իմ լուսե, անմոռաց։

Միայն հուշեր ես թողել դու վառկեզվառ իմ սրտում,
Վոր տարիներ իմ յերգում Թևս լուսե, անմոռաց։

Ու էլ վոչինչ, էլ վոչինչ այս աշխարհում դու չունես,
Վոր սերունդներ քեզ հիշեն, մայր իմ լուսե, անմոռաց։

# ԷՊԻԶՈԴ ՄԱՆԿՈՒԹՅԱՆՍ ՀՈՒՇԱՏԵՏՐԻՑ

Մեր գյուղն ահա մշուշում,
Դեզեր, դեզեր աթարի,
Ու հին կտուրը այն ձյան —
Կիտված սարի կատարին։

Ամեն տարի, յերբ արդեն
Սարում արևն էր փայլում, —
Քաղում էյինք մենք վարդեր,
Ծաղիկների մեջ քայլում։

Վազում, էյինք աղմուկով —
Հանում փեշերը սարի,
Բայց ձյունը դեռ հեռու յեր,
Ամենից վեր կատարին։

Սակայն յեկավ մի սև որ՝
(Ինչպես իմ մայրն էր ասում),
Գյուղը յեկա՛ն մարդիկ նոր,
Ու թնդանոթն էր խոսում։

Մայրս տարավ ինձ լալով
Քույրերիս հետ միասին.
— Մայրիկ, ասի, — ախր ու՞ր,
— Դեպի են սարը Մասիս։

Ու յերբ գյուղից հեռացանք —
Ինձ հետ անթիվ մանուկներ,
Մենք գնացինք ցիր ու ցան,
Դեպի հեռու հյուղակներ։

Ճանապարհին թշնամին
Մաուզերը որոտեց,
Խրխնջաց ձին, սմբակով
Իմ ճակատը տրորեց։

Ու յես ընկա ցեխի մեջ
Ճակատիս վերք մի կարմիր,
Կանչեցի մորս անվերջ,
Վոնց վիրավոր մի մարմին։

Մայրս յեկավ ու լացով
Ինձ իրեն գիրկն առավ,
Մի կտոր հին սև հացը
Իմ վողջ սնունդը դառավ։

Հացը մեկնեց ու ասաց
— Ա՛ռ, վոր էլ լաց չլինես։
Այդպես մեր գյուղը հասանք
Անբախտ թռչունների պես։

Մի հին շորի կտորով
Ճակատիս վերքը կապեց։
Մաուզերի շառաչից
Նորից յերկինքը ամպեց։

* * *

Յերկու որ եր, և ահա —
Մի քաղաքի մոտեցանք,



20048

Ու մեր դիմաց ակամա
Նոր դրոշներ բարձրացան։

Կարմիր, կարմիր դրոշներ
Փողոցի չորս կողմերում,
Բայց մեզ համար անորոշ
Հանգստությունն անհետում։

Դրոշների վրա մենք
Կարմիր տառերը տեսանք,
Շուրջը կռիվ, շուրջը զենք.
Ախ, — մայրիկ, զուր հասանք։

— Հասանք երկին մեր մեծ,
Հասանք օրվան մենք պայծառ,
Ասաց մայրս, ինձ գրկեց
Տարերքի մեջ մեր անծայր։

Իսկ մենք նոր-նոր յերգերով,
Կրկին դարձանք մեր գյուղը,
Ու հետ տեսանք ավերերից
Մեր տները, մեր հողը։

Նորից ուրախ ու հպարտ
Մեր տները վառեցին,
Այս անգամ վերք ճակատին՝
Նոր ծաղիկներ քաղեցին։

Իմ ընկերը իմ փոքրիկ
Վերքին նայեց ու տխրեց.
Ու մեր կանաչ սարերում
Նորից թռչունը ճախրեց։

Իսկ մենք ազատ, ապահով,
Մեր դաշտերում խաղացինք.
Ձմեռը ցուրտ, գարնան հով —
Որերը հետ թռչեցինք.

Թռչեցինք շատ տարիներ
Ծաղիկներով զարդարած,
Հասկեր, հասուն գարիներ,
Վարդեր, վարդեր կարմրած.

* * *

Կրկին մեր գյուղն եմ հիշում,
Դեզեր, դեզեր աթարի,
Ու հին կտուրը այն ձյան—
Կիտված տարի կտուրին.

# ՁԻ՛ԵՐԸ

*Խրխնջացին ձիերը,*
*Ձիերը հուր թափեցին,*
*Փրփուր ու բոց,—ձիերը*
*Փողոցները դոփեցին։*

*Սմբակները միաձայն*
*Աղմկում են, տա՛կ, տա՛կ, տա՛կ,*
*Ես կանգնել եմ վանց արձան*
*Երկինքի դեմ կապուտակ։*

*Ո՜, ձիերը, ձիերը,*
*Այդ վոսկեբաշ ձիերը,*
*Ամուր գետինն են դոփում*
*Իմ խրխնջան ձիերը։*

# ԼԻՐԻԿԱԿԱՆ ԶՐՈՒՅՑ

*Այս հեռու, հեռու աշխարհից,*
*Արևից մեր պայծառ ու լուսե,*
*Զգում եմ ընթացքը դարերի,*
*Զգում եմ՝ յերգեր պիտի հյուսել։*

*Յերգեր նոր, վոր հուր են, հրավառ են —*
*Դառնում են փոկերի աղմուկ,*
*Տես յելնում են դեմքեր խնդավառ*
*Ու մեր կուռ շարքերը սեղմում։*

*Իսկ սիրտն իմ նայիրյան արևով*
*Վողողված այս կարմիր յերթից՝*
*Քեզ կանչում է, կանչում ու ասում —*
*Պատմության նոր գիրքը թերթիր։*

*Յեվ վորպես 'անման հուշարձան*
*Կկանգնեն քո դեմ նոր դեմքեր,*
*Նոր դեմքեր, վորոնք իմ յերգի*
*Հաղթական հերոսները դարձան։*

*Իմ հոգին թրծել եմ նայիրյան*
*Հրաբորբ շողերով արևի,*
*Յեվ ամեն կաթիլն իմ արյան*
*Կարծրացել է կարծես ավելի։*

*Սիրել եմ մեկին, հազարին,*
*Սիրել եմ սարերը մեր սիրուն,*

Աղջիկներ բռնած շուրջպարի,
Թեվ շուրջը ծաղկազարդ գարուն։

Թեև յերգել եմ նաև մեր կարմիր
Աշխարհի բոլոր մասերում,
Իր կնիքը նա դրեց իմ վրա —
Թեվ ահա քեզ եմ նվիրում։

Ու կանչում եմ այսօր քեզ դեպի
Մեր շարքերը կարմիր, յերկաթե,
Դեպի մեր պայծառ ապագան,
Վոր վառվում է արդեն հրաթև։

---

## ՍՈՆԵՏ ՄԻ ՓՈՔՐԻԿ ԱՂՋԿԱ ԺԻՇԱՏԱԿԻՆ

Քո աչքերը, քո աչքերը սևաթույր,
Քո յերգերը, քո յերգերը հրեղեն,
Նորից գիշեր, ու նստել եմ յես արթուն,
Թափվում է հորդ աշնանային մի հեղեղ։

Յես զգում եմ, զգում եմ յես քո բույրը,
Քո հմայքը, իմ սևաչյա քաղցր քույր,
Ո՜, այն քաղցր, ո՜, այն քաղցր համբույրն է,
Վոր դրոշմվել, մնացել է իմ հոգում։

Դուրսը ահա, մեղմ անձրև է ու աշուն,
Կաթիլները համբուրում են ապակին,
Ու յես կրկին, կրկին դեռ քեզ եմ հիշում...

Յեվ վառվում է նոր խնդությամբ իմ հոգին։
— Վորքան շուրջս լինի անձրև ու մշուշ,
Կբարձրանա քո պատկերը վորպես հուշ։

# ԴԵՊԻ ՀԱՆՔԵՐԸ

*Արշավիր, գնացք իմ, արշավիր, —*
*Անտառներ հեռու ու շավիղ…*

*Ահա մտնում ենք,*
*Ու մեզ սպասում են*
*Ընկերները մեր խոր հանքերի*
*Այժմ մենք գնում ենք,*
*Յեվ նրանք զգում են*
*Ընթացքը մեր կուռ շարքերի*

*Արշավիր, գնացք իմ, արշավիր, —*
*Անտառներ հեռու ու շավիղ։*

*Այնտեղ, խոր ձորում այն*
*Ու հանքերի խորքերում*
*Քանդում են, քանդում, քանդում,*
*Այնտեղ, ուր համայն են*
*Շարքերը, ու յերգում են, —*
*Ջրերը, ջրերը բանտում,*

*Արշավիր, գնացք իմ, արշավիր, —*
*Անտառներ հեռու ու շավիղ։*

*Մենք գնում ենք,*
*Ոգնելու յենք,*
*Շարքերին, շարքերին հանքերի,*
*Մինչ վերջին վարկյանը*
*Նոր ճամբան բանալու յենք*
*Յերկաթյա մուրճերը ձեռքներիս*

*Արշավիր, գնացք իմ, արշավիր, —*
*Անտառներ հեռու ու շավիղ։*

# ՅԵՐԴՈՒՄ

Բարձրանում են դեմըս օրեր վոնց ծիածան,
Ու ջրերը զուլալ, առվակները հոսուն,
Առվակները, վոր այժմ հսկա գետեր դարձան,
Ու յերկաթե թռչունն ե մեր դաշտերում խոսում։

Նա կանգնել եր հանգիստ այն առվակի ափին,
Ու պատմում եր յերկար ինչ-վոր անդարձ հուշեր,
Բարձրանում եր բարակ փոշին այն նեղ ճամբից,
Շուրջը սակայն մշուշ ու անթափանց գիշեր։

Վերջին ժամն եր հասնում, յերբ նա արդեն
Կյանքի նոր դարբնոցը պիտի գնար,
Իր չտեսած անհարթ ճամբաները հարթեր,
Թրծեր վոգին հրոցն այն, արիանար։

Նա ինձ ասաց,— յերբեք դու չտխրես սակայն,
Իմ պայքարի անմահ հերոսական ընկեր,
Յես պատրաստ եմ վերջին մարտին ամեն վայրկյան,
Թեկուզ յելնեն անթիվ աերոններ ու տանկեր։

Վերջին կաթիլը արյան յես այն վերջին ժամին
Հաղթանակի համար չեմ խնայի յերբեք,
Թեկուզ փչի մահվան փոթորկալից քամին,
Յես իմ հոգին հենց այդ հրով պիտի սրբեմ։

Նա նայում եր դեմքիս իր ժպիտով թեթև՝
Յերդումներ եր տալիս հերոսական բաղում,
— Յեթե մարտը լինի ու պահանջեն յեթե,
Յես կլինեմ այնտեղ՝ մեր առաջին շարքում։

Վերջին անգամ թեթև այդ ժպիտով նորից
Նա իմ ձեռքը սեղմեց ու հեռացավ,
Իսկ լուսինը կախվել եր մեր դիմացի սարից
Յեվ լոկ ժայռը մնաց, վորպես քարե արձան։

# ՎԵՐՀԻՇՈՒՄ

*Նորից աշունն է հիմի,*
*Արտերում մեր լայն.*
*Նորից յերգում է քամին*
*Դաշտերում համայն...*

*Հեռացել ես դու արդեն*
*Մեր այս նոր տանից,*
*Տես բացվել են վառ վարդեր, —*
*Ո՛, քանի՛, քանի՜*

*Քանի՜ անգամ արևը*
*Ցերեկով բարձրացավ, —*
*Բայց դու վերքով գնացիր,*
*Ու հետ չդարձար...*

*Հիշիր այն մեղմ յերեկոն,*
*Ծառերը մերկ,*
*Դրսում քամին եր յերգում*
*Աշնանային յերգ...*

*Կրկին դու յես իմ դիմաց*
*Վոնց արձան քարե,*
*Որեր անցան, իսկ հիմա՝*
*Վոսկեվարս արև.*

# ԱՌԱՏՈՒԹՅՈՒՆ

Շաղում են ահա, բերքերը, բերքերը,
Սաթինքների պես ճութեր խաղողի,
Ամառ, լսում ես դու մեր յերգերը
Յերգը, յերգը՝ նոր մարդու ու հողի։

Քո ասեղները վառկեցույն ու սուր,
Մեխել ես դարձյալ կրծքում հողերի,
Իսկ մենք հիմա ահա՛, քո յերգն ենք հյուսում,
Հագեցած խինդով քո լույս շողերի։

Ո՜, ամառնային արև հուրհերան
Դու, առատության մայրը գթառատ,
Որ կրկին ահա խփել ես վրան,
Շողերով քո հուր, լիության առատ։

Յեվ ամեն մի հասկ, վոր հասունանում,
Ու տարածվում է շողերից ներքո,
Այդպես մեր սիրտն է կրկին կարծրանում,
Վառ ամառնային բերքերի յերգով։

# ԳԻՇԵՐԸ

Փակել է կրկին գիշերը, գիշերը,
Նստել, ծանրացել է աշխարհի վրա,
Սև գիշերում այս քո հին հուշերը
Վառվում են պայծառ հրդեհի նման։

Փողոցում ահա քամին է պարում
Գիշերվա մթին սև ու ածուխե,
Սև ձյան վրա յե նոր տողեր շարում,
Ինչպես մատիտով գծող յերեխան։

Քավում է նա թույլ փակ դարպասներին,
Կոտրտում նորից փաթիլները ձյան,
Իսկ շուրջը, շուրջը, — մերկ փողոցներից,
Չի լսվում կարծես վոչ շշուկ, վոչ ձայն։

Իսկ ներսում ահա, դռներից այդ փակ
Դառնում են կրկին անիմներ, փոկեր,
Մարդկային դեմքեր, շուրջը բոց, կրակ,
Ու սովորական նույն աղաղակն եւ

Մութ անկյուններից յելնում են կարծես
Անցնում են նրանք ձյուների միջով,
Դեմքեր մարդկային, ստվերներ անձև,
Ու կրկին այդպես քաղաքն է ննջում։

# ԱՄՐՈՑՆԵՐՈՒՄ
## (ՀԵՐՈՍԱԿԱՆ)

*Փողփողում են ահա տես, մեր դրոշները նորից,*
*Մեր շարքերը քայլում են յերկաթակուռ ու տոկուն,*
*Բարձրանում է արևը կատարներից լեռների,*
*Իսկ բերդերում մեր ամեն նոր շեփորն է աղմկում։*

*Բայց բերդերը այդ բոլոր, վոր գրավել ենք հերթով,*
*Վոր անցել ենք բյուրավոր յերկաթակուռ տարիներ,*
*Այնտեղ արյունը հոսեց, շատերն ընկան մեր յերթում,*
*Պայքարեցին ու մեռան ինչպես արի հերոսներ։*

*Ահա այդ գիրքը թերթիր իմ մտերիմ բարեկամ՝*
*Յեվ քո դիմաց կբացվի անապատը արյունոտ,*
*Վորպես վահան կչողա մի նորափայլ արեգակ,*
*Վոր լողում է այժմ մեր յերակների արյունում։*

*Այնտեղ ընկան մեր հերոս ընկերները, ո՛, նրանք,*
*Մինչև վերջին բոպեն մերկ սվինները պահեցին,*
*Խոնարհվեցին տխրությամբ մեր դրոշները կրակ,*
*Յեվ ջրերի նման պարզ տարիները սահեցին։*

*Տարիները սահեցին, և որերի աղմուկում*
*Մեր կամքերը կոփվեցին, մեր վոգիներն ամրացան,*
*Մարդը քայլեց հաղթությամբ հինը թողած դղյակում,*
*Նոր պայքարի հուրը թեժ մեր սրտերում ամրացավ։*

*Թեվ առաջնորդը մեր մեծ, վորի միտքը վոնց արծիվ,*
*Սավառնում է անդադար հորիզոնից հորիզոն,*
*Առաջնորդում է մեզ նա՝ դեպի բարձունքը անծիր,*
*Բայց արևն է խստությամբ մեր վոգիները կիզում։*

*Դեռ կընթանանք մենք այդպես մինչև գագաթը վերջին,*
*Մինչ մարտերից մենք դառնանք հաղթանակի յերգերով,*
*Մինչ փոթորիկը գալիք իր վերջին հողմը փչի,*
*Ու մենք քայլենք աշխարհում յերկաթակուռ շարքերով։*

---

# ՆՐԱ ԱՉՔԵՐԸ ՀՐԴԵՀ

*Սիրով վաղամեռ ընկերոջս՝*
*Ս ե ր ո բ  Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն ի ն*

*Մանկությունը հիշելիս՝ սիրտս դառնում է գինով...*
*Ես մի ընկեր ունեյի Լիպո անունով...*
ԵՂ. ՉԱՐԵՆՑ

*Օրերն անցան, գնացին ու տարիներ յեկան նոր,*
*Նոր արևներ շողացին լույսի խուրձերը փռած, —*
*Դեռ մնում է իմ մտքում մի պայծառ դեմք, մի պատկեր,*
*Մի գալկադեմ պատանի, մի հրահեր, հուր տղա։*

*Ցավ աչքերում նրա զույգ պայծառ ժպիտն էր փայլում,*
*Կարծես արևի հետ էր նա մեր աշխարհը յեկել,*
*Այժմ ահա իմ դիմաց կարծես դեռ նա յե քայլում,*
*Մոտենում է ինձ կամաց և ուզում է բարևել։*

*Տեսնում եյի յես նրան, կռթնած փոքրիկ սեղանին՝*
*Գլուխը ցած խոնարհած, նա կարդում էր ու կարդում,*
*Կարծես յերբեք չէր հոգնում այդ գալկադեմ պատանին,*
*Ցավ էր սրտում նոր կյանքի նոր արևն էր թպրտում։*

*Ու թերթում էր էջերը, կարդում, կարդում ու կարդում,*
*Մինչև արևը մտներ ու աստղերը փայլեյին,*
*Ա՜խ, յես յերբեք ու յերբեք չեմ մոռանա այդ մարդուն,*
*Այդ հրահեր պատանուն, այդ գալկադեմ տղային։*

*Սակայն հետո յեկան նոր օրեր, օրեր, ու անցան,*
*Մեր սարերում նոր գարնան արևի շողքը փայլեց,*

Գարնանային ճ, քանի, քանի վոսկյա ծիածան
Աշխարհին նոր խնդություն ու նոր արև ավետեց։

Այդ որերի հետ մեկտեղ շուրթերն արդեն պապակած,
Մեր աշխարհից անցավ նա, վորպես շողքը արևի,
Ինձ թվում է, թե կրկին նա յե գալիս գլխաբաց,
Մոտենում է ինձ կամաց և ուզում է բարևի։

Յեվ յերբ այժմ յես հիմա կրկին նրան եմ հիշում,
Ինձ թվում է, թե դա մի նոր տեսիլ եր, նոր յերազ,
Նրա քայլվածքը խրոխտ և հուր աչքերն եմ հիշում,
Տխրությունն իր թևերով դեռ իջնում է իմ վրա։

* * *

Իմ գալկադեմ պատանի, իմ վաղամեռ բարեկամ,
Կրկին անա արևն է մեր աշխարհում փայլփլում,
Բայց ախ, դու յես միշտ հեռու, դու՜ յես, դու՜ յես, վոր չկաս—
Քո փոխարեն մեր յերթում նոր հերոսներն են քայլում։

## ԸՆԹԱՑՔԸ

*Հոսում են օրերը, անընդհատ հոսում են,*
*Սաստկանում է ձմեռը, փչում է քամին,*
*Զգում եմ, վոր սիրտն իմ դեռ քեզ հետ խոսում է,*
*Նստած քաղաքում այս հիմի։*

*Այս ձմռան բուքերի պես սաստկացել է վոգին իմ,*
*Սաստկացել են յերգերս, նա վոր դեռ թույլ եր,*
*Յեվ այժմ միայն, այժմ յես զգում եմ,*
*Վոր օրերը, ժամերը, վարկյանները մեր այլ են։*

# ՄԵՏՐՈՍՏՐՈՅՈՒՄ

Զույգ գծերն են ահա յերկաթե,
Վոր կիսում են սիրտը յերկրի,
Այդպես ամեն մի ակնթարթը,
Յեվ ընթացքը մեր կուռ շարքերի, —
Հարթում ե ուղին, վոր անհարթ ե
Ինչպես մուրճը կրծքում լեռների։

Քաղաքում այս, վոր միշտ ցրտաշունչ
Աղմկել ե ձմռան սառ քամին,
Ու մայլը, այս մթին մշուշում
Տարիներ քանի՛, քանի՛,
Արդյոք ով եր կյանքը իր մաշում
Վոնց ստրուկը գանձերումն այն խանի։

Այդ նրանք են, վոր հար կավել են
Ու պայծառ ուղիներն այս գծել,
Իսկ այժմ ահա, տես փակել են, —
Ընդերքում մեր յերկրի զույգ գծեր։

Կոմսոմոլը վերին շարքումն ե,
Ահա Վարյան, քլունգն իր ձեռքին,
Ամեն հարվածի հետ յերգում ե,
Ժպտալով նայում տղերքին։

Տղերքը մի վայրկյան դիմացից
Նայում են, ու նորից ել խփում,

— Էհ, նայի՛ր, նայի՛ր դու վերևից,—
Ահա հողը, հողն է ցած թափվում։

Իսկ մյուս բրիգադում արդեն
Կանչում են և՛ ասֆալտ, և՛ ցեմենտ,
— Հարկավոր է այս ուղին հարթել
Ու բանալ ճամբաներն այն ամեն։

Ու նորից շախտերում հարթում են,
Հերոսները քարը, ցեմենտը,
Այդպես նրանք են, որ արթուն են,—
Մեր ամեն, ամեն մի մոմենտին։

# ԼՈՒՅՍԵՐԸ

*Մենք այն գիշեր մարտերից յերգերով դարձանք,*
*Մենք այն գիշեր աշխարհում հրդեհ վառեցինք,*
*Ու գագաթում այն լեռան դրինք մի արձան,*
*Մենք այն գիշեր գյուղերում լույսեր փառեցինք։*

*Յեվ անտառում այն մթին լույսի ամեն ճառագայթ*
*Շողաց վորպես նոր կյանքի հազարամոմ մի արև,*
*Լուսավորեց նա պայծառ մեր ուղիներն ազատ,*
*Հին գյուղացին մեր արագ ընթացքի դեմ շվարեց։*

*Բայց յերբ ամեն խրճիթում ու գյուղերում մեր ամեն*
*Լույսի հազար ճառագայթ և արևներ փառեցինք,*
*Նա հենց ինքը դուրս յեկավ մեր շարքերի հետ մեկտեղ,*
*Յեվ միասին հորդառատ ջրերի դեմ գնացինք։*

*Այն ջրերի դեմ, վորոնք անվերջ հոսել են իզուր*
*Վայրի անտառն և աճել լեռան փեշերին,*
*Նրանց աղմուկն եր միայն այն հովիվին հուզում,*
*Վոր քնում եր գառան հետ այդ մեղմ գիշերին։*

*Բայց հովիվը այդ փոքրիկ, վոր տանջվել է միշտ,*
*Յերազել է արդյոք նա աշխարհը լուսե,*
*Մտածել է, վոր մի որ չի լինելու վիշտ,*
*Յերբ իր յերգը կլինի այնքան պարզ ու սեգ։*

*Այսոր այդ նա յե ահա, վոր յելնում է տես,*
*Բարձրանում է հերոսի անմահ անունով,*

Հարվածներով իր հաղթող, ու յերգերով իրեն վեր,
Բանակների հետ մեր մեծ գնդի նոր մարտ ե գնում։

Ու մեր ընթացքը յերբեք, յերբեք չի կանգնի,
Այլ կնետվենք մենք նորից լեռներով առաջ,
Առաջնորդը մեզ վերջին մարտը կտանի,
Նոր խնդություն ու նոր սեր, նոր հույզեր առած։

Մենք այն գիշեր մարտերից յերգերով դարձանք,
Մենք այն գիշեր աշխարհում հրդեհ վառեցինք,
Ու գագաթում այն լեռան դրինք մի արձան,
Մենք այն գիշեր գյուղերին լույսեր փռեցինք։

# ՎԵՐՋԻՆ ՀԱՏԻԿԸ

Վերջին հատիկ, վերջին լույս, քեզ թաղում ենք հողի մեջ,
Քեզ հանձնում ենք յերգերով համայնական հողերին,
Սևահողը փակում է իր թերթերը եջ առ եջ,
Յեվ դու սնվում ես արագ բոլոր արևի շողերից։

Քեզ հետ աճում են նաև իմ յերկրի վարդերը —
Արևն ամեն րոպե ձեր շուրթերն է համբուրում,
Կարմրում են ու ցրվում նրա քնքուշ թերթերը,
Վոմանք քայլում են թեթև, այդ թերթերը տրորում։

Յեվ դու կարմիր վարդի հետ քո հասկերն ես արձակում,
Հետո դառնում են նրանք վոսկեշաղախ, վոսկեգույն,
Մերթ անձրևն է աղմուկով ձեր թերթիկները թակում,
Ու այդ յերգերը բարակ, այնքան քաղցր է իմ հոգում։

Նույնպես քաղցր են իմ հոգում բոլոր յերգերը նրանց, —
Հատիկների վոսկեգույն, վոր հողի մեջն ենք թաղում,
Մեքենան է արշավում սև ցելերի վրա,
Յեվ սերմերը լիառատ սև հողերի մեջ մաղում։

* * *

Վերջին հատիկ, վերջին լույս, քեզ թաղում ենք հողի մեջ,
Քեզ հանձնում ենք յերգերով համայնական հողերին, —
Սևահողը փակում է իր թերթերը եջ առ եջ,
Յեվ դու սնվում ես արագ բոլոր արևի շողերից։

# ԱՆԻՎՆԵՐԻ ՄՈՏ

*Արդեն գիշեր է գործարանում,*
*Նստել է թանձր մութն արդեն,*
*Կյանքը լռում է վորպես գարուն,*
*Յերբ բորբոքվում է վորպես հրդեհ։*

*Փչում է ցուրտը, փողոցում յերբ, —*
*Ձյունը փռվում է վորպես կտավ,*
*Նստում մայթերին, ծառերին մերկ,*
*Այս գիշերին մութ, բաց յերկնի տակ։*

*Իսկ պատերից ներս գործարանի*
*Այդ հսկա, հսկա կուռ դարբնոցում,*
*Ո՜, քանի, քանի, քանի անիվ —*
*Դառնում են արագ փոկեր ցնցում։*

*Փոկեր, վոր հսկա վորպես նյարդեր —*
*Փռված ամենուր այս ցեխերում,*
*Իսկ դուրսը, դուրսը ահա արդեն՝*
*Ձմռան քամին է դեռ դեգերում։*

*Բայց այդպես քանի՜ սրտեր անցան*
*Ու քանի ձմեռ յեկավ կրկին,*
*Յերբ յելան նրանք ու բարձրացան, —*
*Շարքերն այն հսկա ու ահագին.*
*Յեվ ամեն մեկը հերոս դարձած, —*
*Խստությամբ սրբեց իր թույլ հոգին։*

Յեվ այդպես ահա տարինների
Այդ աղմկալից անհուն ծովում,
Ընթացքից անթիվ անիվների —
Մեր կյանքի պայծառ յերգն ե լսվում՝
Յերգն այն, վոր յերգն ե մեր սրտերի
Ու տարինների միջից խոսում։

Այն տարինների մեր բազմաթիվ,
Վոր անցանք կռվով, սրով անցանք,
Յեվ ամեն, ամեն ակնթարթին
Մենք դեպի դիրքերը բարձրացանք,
Իսկ դիրքերում այդ հիմա արդեն
Մեր դրոշներն են ալեծածան։

# ՁՄԵՌԸ

Ահա ձյուն է, ձմեռ է, փոթորիկ է դրսում,
Ցեվ կարծում ես թե նա՛ չէ, վոր ամենից խելառ է,
Քայլում ես մայթերով դու, զգում ես մի սարսուռ,
Ու թվում է, թե ինքդ ինչ-վոր անհանգիստ ես։

Սպասում ես ամառը ջերմ արևով լեցուն,
Վոր նա գա շորորալեն՝ վառե քո հարսնացուն,
Բայց ո՛, սիրելիս իմ, թե ձմեռն ու թե ամառը —
Ցուրաքանչյուրն իրեն խստությամբ է լեցուն։

# ԸՆԴԵՐՔՈՒՄ

Ինչպես զինվորները առավոտյան միգում
Առավոտյան պայծառ արշալույսից առաջ,
Վոր արթնանում, քայլում ու կռվում են խրոխտ,
Մարտերում նոր կորով ու խնդություն առած։

Այժմ ահա այստեղ, այս նրանք են կրկին,
Վոր յերգում են հանքում. շուրջը յերգ ու շառաչ։

Յեվ ընդերքում ահա այս խորքերում չերգած
Այս քաղաքի սրտում, վորպես մի պատանի,
Յերկաթեղեն իր կուռ զրահները հագած,
Արշավում է մեր նոր, մեր մեծ հրետանին։

Այս գծերով, այս զույգ ուղիներով հիմա
Մեր յերկրի սրտում, սրտում այս քաղաքի —
Ընթանում են նրանք մեր աչքերի դիմաց,
Իրենց ճիչը խառնում այս մեծ աղաղակին։

Նրանց դիմաց նորից ելեկտրական, պայծառ —
Այս լույսերը, վորպես արեգակներ յերկու,
Վոր իջել են կարծես ու փակել են անծայրը,
Հազարավոր կայծեր յերկրի այս ընդերքում։

Յերբ կանգնում ես մի պահ ու մտածում կրկին
Հար նայելով այս նոր արեվներին վառման, —

*Ամրանում է սիրտդ, ամրանում է հոգիդ,*
*Այս յերգերից մեր նոր, այս ընթացքից հիմա։*

*Թող ընթանան կրկին այս գծերով յերկաթ*
*Հանքերում մեր յերկրի հազարավոր անիվ,*
*Հազարավոր մուրճեր թող աղմկեն յերկար,*
*Նարնջագույն լույսեր շողան կամարներից։*

# ԹԱՓԱՌՈՒՄՆԵՐ

*Որքեր անցած, որքեր անդարձ,*
*Որքեր վառման կարմիր հրի, —*
*Իմ մանկություն մերկ ու քաղցած*
*Ու տքնաջան տարիների —*
*Վորբությունը թողած հետև*
*Քեզ եմ յերգում նոր լուսաբաց։*

*Քեզ եմ յերգում նոր արշալույս,*
*Վոր բացվել ես հոկտեմբերից,*
*Նրան, վոր նոր է դեռ գալու*
*Ու անցնելու անապատից։*

* * *

*Ինչպես թռչուն մի փետրահար*
*Թափառել եմ գյուղեր հեռու,*
*Բայց միշտ հաստատ զգալով հար,*
*Վոր իմ սրտում հուրն է յեռում։*

*Յես քայլել եմ յերկաթ կամքով*
*Խրճիթներից այն ցիրուցան,*
*Վորոնց տեղը մեր քրտինքով*
*Նոր պալատները բարձրացան։*

*Այս որերում ինքս էլ սակայն*
*Քայլում եմ հար հաստատ հույսով,*
*Թեկուզ գիտեմ — բոլորը չեն*
*Բարձրանում վեր պայծառ լույսով։*

Սակայն լեռ իմ ձեռքում պահած՝
Տանում եմ վեր ջահը մեր մեծ,
Այն ջահը վառ, վորը ահա
Նկուղները լուսավորեց։

Ու այդ պայծառ լույսի ներքո
Ելանք նորից ու քայլեցինք,
Ելան նորից ու վառվելով —
Մեր արևները փայլեցին։

Ահա ինչու անթիվ որեր
Ու տարիներ շարան, շարան,
Անապատներն եմ տրորել
Ու խստությունն իջել վրաս։

Այդպես է վոր իմ թույլ հոգին
Թրծելով այդ անմար հրում,
Քայլել եմ միշտ աչքս հառած
Կատարներին այն կարմրուն։

Քայլել եմ միշտ։ Եվ իմ դիմաց
Միշտ թափված են յեղել քարեր,
Բայց յես հաղթել եմ տես հիմա —
Մեր մեծ դարին հրեարե։

Ու նրա հուր շողերը լույս
Տարածվել են հեռու՛, հեռու,
Վորոնց լույսով միլիոնների
Սրտերն են տես անզուսպ յեռում։

Ես կքայլեմ դեռ կռվելով
Մինչև կայանը այն վերջին,
Մինչ նոր փողերը աղմկեն,
Ու ձայնն հասնի իմ ականջին։

# Ի՞ՆՉ ԵՍ ՍԻՐՈՒՄ

*Ի՞նչ ես արդյոք դու սիրում,*
*Անձրև, աշուն, թե արև,*
*Ծաղկեպսակ ջինջ գարուն,*
*Թե հանդը խուլ, ամառե։*

*— Յես սիրում եմ բոլորը*
*Ինչպես արևը հողին,*
*Վորովհետև ամեն մեկն*
*Ունի պայծառ իր ուղին։*

*Ամեն մեկն իր տխրությունն*
*Ու քաղցրությունը ունի,*
*— Յերգիր հիմի յերգը դու —*
*Թե հոգի, թե արյունի։*

* * *

Նա գալիս է, նա գալիս է,
Ի՞նչ է տեսում, չգիտեմ,
Ցերեկները տես, դեռ լալիս է,
Մայրս հոնքերն է կիտել։

Նա թափում է արցունքները
Վարար, վարար հողի վրա,
Մայրս սակայն դեռ նստել է,—
Վոտքը դեմի քարին դրած։

Ցես տեսում եմ՝ թող գա մայրիկ,
Թող գա, թրջի մեր հողը չոր,
Հերիք է վոր արեն այրի,
Դաշտը մնա մերկ ու տաչոր։

Այդպես նստած նրա դիմաց
Ցես վիճում եմ կրկին, կրկին,
Մինչ բարձրանում են ակամա
Շողերը լույս արեգակի։

---

# ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆ

Ո՞վ չի արդյոք հիշում իր մանկությունը վոսկեթել,
Իր մանկության մշուշը ծով չի արդյոք յերազում,
Որերը վոնց թռչուններ, մի յեղնիկի պես անթեվ,
Վոր անցել են ու չկան և մեր սիրտը չեն հուզում։

Ո՜, մանկության իմ որեր, իմ առաջին սերմնացան,
Վոր իմ սրտում պատանի սերմանեցիք նոր յերգեր,
Յեկաք ու հետ գնացիք, վորպես գարնան ծիածան,
Յեվ ծով արդյոք իր յերգով որերն այդ չի գովերգել։

Այլևս ինձ չեք հուզում, դուք իմ որեր պատանի,
Յեվ մանկության արնաներկ արևը մերկ, վոսկեփայլ,
Այլևս քեզ չեմ յերգում իմ մանկություն գեղանի,
Թեկուզ որերն իմ անցան ուրիշներից մի քիչ այլ։

Յե՛ս յերգում եմ այժմ քեզ, քեզ, ապագա մանկություն,
Վոր վոսկեղուն պիտ լինես մանուկներին մեր անթիվ,
Դու, վոր պիտի դեռ սնես նոր սերունդը մարդկության,
Վորոնք արև պիտ տեսնեն մանկության տեղ մեր մթին։

Ո՜, մանկություն նոր մարդու, ո՛, մանկություն ապագա,
Քեզ հազար յերգ, հազար փառք, հազար արև վոսկեշող,
Յես չեմ յերգում այլևս մանկությունն իմ միգապատ,
Արյունի մեջ շաղախված՝ բյուր դիակներ կամ աշուն։

Թե յես արնով ծնվեցի ու արյունով մեծացա,
Որեր, անթիվ ամիսներ քաղցած ու վորբ մնացի,

Դու. պիտ ծնվես արևով մեր նոր մանուկ վառվեծամ
Ու կարոտով չես նայի դու մի կտոր սև հացի։

Երբ արևը մեր հին վառկե շրջանն է գծում,
Ու հոսում են օրերը բյուր, վարկյաններ ու ժամեր, —
Հազար մանուկ այդ պահին հազար ասինք են ծնում,
Նույն արևի տակ անմար, անկյուններում մեր ամեն։

Կրկին վողջույն քեզ հազար, քեզ, մանկություն ապագա,
Դու, վոր և՛ փառք ես հիմի, և՛ խնդություն, և՛ արև,
Վողջույն քեզ նոր մեր մանուկ, վառկե շորերդ հագած,
Գարնանային բույրով լի՝ հազար վողջույն ու բարև։

# ԿԱՐՄԻՐ ՔԱՂԱՔ

Ներքից տեսա փռվել ես դու —
Իմ դեմ հսկա կարմիր քաղաք,
Ուր քայլում են մարդիկ խնդուն
Փողոցներով բազմաղաղակ։

Ուր յելնում են սառվածից՝
Թույլ արևը դեռ չծագած,
Մարդիկ անհաղթ կանգնած վառի —
Քայլում են դեպ վառ ապագան։

Քայլում են հար Ինքս էլ սակայն
Այդ շարքերում վորպես զինվոր,
Առնելով մառ որերը այն,
Ընթանում եմ ճամբով այս նոր։

Ցավ յես յերբեք էլ չեմ հոգնի
Այս շարքերում անվերջ, անծայր,
Ուր փողփողում են տես հիմա —
Մեր դրոշներն ալեծածան։

Կարմիր քաղաք, ո՜, քո մասին
Ինչքա՜ն տեսա, վոր չի գրվել,
Ինչքա՜ն տեսա, վոր չի արվել
Քեզ, մարքերի ծովը անծայր։

Մեծ պոետները հին դարի
Յերգել են քեզ ու անց կացել,

Բայց նրանց լույս այդ գոհարից
Մեր սրտումն էլ է մնացել։

Յեվ նոր մի փայլ տալով նրան
Ու առնելով ձնար մի նոր,
Յերգում են քեզ ահա նրանք —
Մեր պոետներն արևավոր։

Մենք չենք յերգում այլևս քո
Արյունամած որերը հին,
Այլ շառաչող մի նոր յերգով
Լույս ենք վառում ճանապարհիդ։

Ու փռելով կայծեր հազար —
Հազար սրտեր բաբախելով,
Հասել ենք մենք մեր յերազած
Դարին — միշտ հինը փոխելով։

Կարմիր քաղաքդ, կրկին անգամ
Վողջույն անհաղթ քո բանակին,
Վոր վառելով ջահն իր կրկին —
Տանում է Մեզ լույս ապագան։

---

# ՍՏԱԽԱՆՈՎՅԱՆ ՀԵՐԹ

Ո՞վ է այսօր հանքերում քանդում շերտերը հողի,
Ո՞վ է մթին անտառում վառում մի նոր լուսարձակ,
Երգերով վառ խնդության ու պայքարով կատաղի
Ո՞վ է իր մուրճը խփում Բուսիգինից համարձակ։

Եվ իլիկները ահա, վոր դառնում են նոր թափով,
Շոգեքարշերը հսկա շառաչյունով սրընթաց,
Ո՞վ է այնտեղ, լեռներում վերջին քրտինքն իր թափում,
Ո՞վ է վարում այդ հսկան — իր լույս աչքերը անթարթ։

Այդ նրանք են նոր մարդուն դեպի արևը կանչում,
Ստախանովն է ահա այն հեռավոր Դոնբասից,
Փրփրաբաշ գետերի պաղ ջրերն են կարկաչում,
Եվ լույս կայծերն են թռչում հսկայական Զագեսից։

Մեծ Լենինի քաղաքից մինչ գյուղերը հեռավոր
Շոգեքարշերն են թռչում ցուլերի պես կատաղած,
Մարդը սակայն իր ձեռքի վինտները չի մոռանում,
Իր ականջին հասնելով մի անսահման աղաղակ։

Հարյուրավոր իլիկներ և դազգյահներ ու, հարյուր
Տեռ, դարձնում են նրանք — տերերը մեր յերկրի,
Վինոգրադովան իր վերջին ուժերը չի խնայում, —
Վոր մեր կյանքը դարձնենք ե՛լ ավելի բերկրալից։

Սմետանինն է նրանց ձայնակցում հյուսիսից,
Վոր մարդկային պահանջի մի մասնիկն է կատարում,
Իսկ քաջարի մի հերոս ու համարձակ Կրիվոնոս —
Իր մաշինով սրընթաց նոր ճամբաներն է կտրում։

Ո՛, վողջույն ձեզ, նոր կյանքի նոր արշալույս բերողներ,
Վոր պատմության անիվը նորից շարժեք դուք պիտի,
Ձեր անունը այդ մենք ենք — նոր արեգակ կերտողներ,
Վոր պիտ գրենք մեր պայծառ վոսկեդարի ճակատին։

# ՎԱՐԴ ԱՂՋԻԿ

Վարդի նման բացվել ես,
Վարդ աղջիկ, վարդ աղջիկ —
Սիրտս սիրով լցրել ես,
Սարերի սև աղջիկ։

Այտերդ թուխ են կապել
Արևից, արևից,
Տես գալիս է նա քեզ մոտ,
Բարևիր, բարևիր։

Նա գալիս է, վոր միշտ քեզ հետ,
Հասկեր քաղի, վոսկի, վոսկի,
Վոր վոսկու պես մաքուր մնա,
Լսի ամեն քաղցր խոսքիդ։

Իսկ դու կարմիր վարդերի մեջ
Վազվզում ես այնքան թեթև,
Այնքան ճկուն, այնքան արագ,
Ինչպես սիրուն թռչնիկի թև։

Վարդի նման բացվել ես,
Վարդ աղջիկ, վարդ աղջիկ,
Սիրտս սիրով լցրել ես,
Սարերի սև աղջիկ։

# ՊԱՀԱՆՋ

*Շարքերն այն ահա, անծ, հոսում են,*
*Վորոնց ճակատն է քամին շոյել,*
*Նրանք քայլում են ու ասում են՝*
*— Մեր յերգը յերգեր, մեր Նոր պոետ*

## ԳԱՐՆԱՑԻՆ ԱՆՁՐԵՎ

Ո՜, թափվիր առատ գարնային անձրև,
Թափվիր մեր անծայր հողերի վրա,
Թափվեցեք հորդուն կաթիլներ անձեվ, —
Դուք սառը զեփյուռ, իմ սիրտը կրակ։

Ձյան վերջին, վերջին բեկորն էլ նայիր
Անհայտանում է արևի ներքո,
Տես, քեզ են կանչում հողերն ամայի,
Ո՜, հորդուն անձրև գարնային յերգով։

Ամպերն էլ ահա դեռ շարան-շարան
Բարձրանում են հար ձյունոտ լեռներից,
Իսկ ձորում կրկին հեղեղն է վարար,
Վոր հորդում է դուրս իր հին ափերից։

Գարնային անձրև, — թանկագին դու մայր,
Թանկագին վոսկի հողերի սրտում,
Քեզ կանչում են տես, ծիլերը համայն
Հողի ու քարի մեր այս նոր մարտում։

Ո՜, թափվիր անձրև և բույրը քո զով
Արևից հետո փռիր դաշտերին,
Բացվեցեք վարդեր մեր սիրտը հուզող,
Կանգնեցեք հասկեր նման վարդերի։

Ո՜, թափվիր նորից գարնային անձրև,
Թափվիր մեր անծայր հողերի վրա,
Թափվեցեք հորդուն կաթիլներ անձեվ, —
Դուք սառը զեփյուռ, իմ սիրտը կրակ։

# ՔԱՂՑՐՈՒԹՅՈՒՆ

*Համբույրները կուզան հովեն ու ծովեն...*
*Մ. ՄԵԾԱՐԵՆՑ*

*Թող, վոր համբուրեմ քո շուրթերը թաց,*
*Հրեղեն յերգի արև իմ անգին,*
*Նոր հրդեհներով վառվի իմ հոգին,*
*Թող վոր համբուրեմ քո շուրթերը թաց։*

*Յեվ ասեղներից քո ոսկեծարար*
*Թող թափվի ընդերքի հրաշեկ վոսկին,*
*Սիրտն իմ զգում է նոր խինդ, նոր ծարավ,*
*Ծարավ անսահման մի քնքույշ խոսքի։*

*Մինչ գլխիս վրա լուսեղեն յերգով*
*Կվառես նորից քո ջահը պայծառ,*
*Հետո դու ինքդ ստվեր կդառնաս,*
*Իմ գլխի վրա լուսեղեն յերգով։*

# ԿՌՎԻ ՅԵՐԳԸ

Վաղը կռիվ պիտի գնանք
Պիտի հնչեն փողերը,
Սրով գետի հուրը գնանք,
Պիտ խրխնջան ձիերը։

Պիտի յելնենք հողից, հանքից,
Մեր նոր զենքերը կապենք,
Նոր կռվի, նոր աշխատանքի —
Պիտի յերգերը յերգենք։

Գուցե փռվի ծովը մեր դեմ —
Ծովը կարմիր արյունի,
Դրոշները թվան վարդեր —
Ծովում այդ ալ արյունի։

Բայց քո սիրտը, սիրտը քո վառ
Պիտի սրբես արյունով,
Վոր վոսկեգույն արշալույսից
Մենք կռվենք նոր ավյունով։

Դու գիրքերում զգաստ յեղիր,
Իմ անմոռաց բարեկամ,
Քո դեմ բացվում ե նոր ուղի
Մեր որերում արեկա։

Իսկ յես ահա ահա քայլում եմ
Շարքերում այս կապարե,
Արդեն յելել ու փայլում ե —
Նոր խնդություն, նոր արև։

# ՎԵՐՋԻՆ ՑԵՐԳ

Վերջին տող, վերջին լուսեղեն
Գառուղն իմ քաղցրանուշ երգի,
Քեզ ձմռան բուքերին եմ թողել,
Սավերում ամպամած յերկնքի։

Յերբ կրկին արևը գարնային
Տարածվի շաղերովը իր վոսկե,
Կփավեք տողեր իմ այն պահին, —
Վոնց բերքով հղացած հասկեր։

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

էջ


1. Խստություն . . . . . . . . . . . . . . . . . . . 5
2. Ահա արեվ և նորից . . . . . . . . . . . . . . . 8
3. Ցերեկը ամառնային . . . . . . . . . . . . . . 9
4. Հնձվորները . . . . . . . . . . . . . . . . . . 11
5. Աշուն . . . . . . . . . . . . . . . . . . . . 12
6. Սահմանապահը . . . . . . . . . . . . . . . . 13
7. Ջրի կաթիլը . . . . . . . . . . . . . . . . . 14
8. Նայիրյան հուշերգ . . . . . . . . . . . . . . 15
9. Մի մանկան պատմություն . . . . . . . . . . 17
10. Լիրիկական տեսարանից . . . . . . . . . . . 18
11. Գաղել մորս . . . . . . . . . . . . . . . . . 19
12. Նվիրվող մանկության հուշատետրից . . . . . 20
13. Ձիերը . . . . . . . . . . . . . . . . . . . 24
14. Լիրիկական զրույց . . . . . . . . . . . . . 25
15. Սոնետ մի փոքրիկ աղջկա հիշատակին . . . . 27
16. Դեպի հանքերը . . . . . . . . . . . . . . . 28
17. Ցերեկում . . . . . . . . . . . . . . . . . 29
18. Վերհիշում . . . . . . . . . . . . . . . . . 30
19. Ազատություն . . . . . . . . . . . . . . . . 31
20. Գիշերը . . . . . . . . . . . . . . . . . . 32
21. Ամրոցներում . . . . . . . . . . . . . . . . 33
22. Նրա աչքերը հրդեհ . . . . . . . . . . . . . 35
23. Ընթացքը . . . . . . . . . . . . . . . . . . 37

24. Մետրոստրոյում . . . . . . . . . . . . . . . . 38
25. Հույսերը . . . . . . . . . . . . . . . . . . 40
26 Վերջին հատիկը . . . . . . . . . . . . . . .
27. Անիվների մոտ . . . . . . . . . . . . . . . . 43
28. Ձմեռը . . . . . . . . . . . . . . . . . . . 45
29. Ընդերքում . . . . . . . . . . . . . . . . . 46
30. Թափառումներ . . . . . . . . . . . . . . . . 48
31. Ի՞նչ ես սիրում . . . . . . . . . . . . . . . 50
32. * * * . . . . . . . . . . . . . . . . . . 51
33. Մանկություն . . . . . . . . . . . . . . . . 52
34. Կարմիր քաղաք . . . . . . . . . . . . . . . 54
35. Ստախանովյան յերթ . . . . . . . . . . . . . 56
36. Վարդ աղջիկ . . . . . . . . . . . . . . . . 57
37. Պահանջ . . . . . . . . . . . . . . . . . . 58
38. Գարնային անձրեվ . . . . . . . . . . . . . . 59
39. Քաղցրություն . . . . . . . . . . . . . . . . 60
40. Կովի յերգը . . . . . . . . . . . . . . . . 61
41. Վերջին յերգ . . . . . . . . . . . . . . . . 62

ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱ

Отв. ред. А. Адоян
Техред. И. Караяян
Художн. Л. Мелконян

Генрих Туманян

# ВОСХОД

(Собрание стихов на армянском языке)

Отпечатано в тип. Госиздата ССР Армении.
Москва, Армянский пер., 2. Зак. № 472.
Главлит № Б—12986. Тираж 2125. Сд. в наб.
16/III 1936 г. Подписано к печати 25/IV 1936 г.
Печ. л. 2. В 1 п. л. 62700 п. з.

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0045253

Գինը 2 ռ. 50 կ.

[184]
Բ 93
A I/8274